

յայտարարեց թէ «Թուղթդ այդ բնաւին սուտ է, զի ոչ իմ հօրեղբայր Մեւքիսեթ կաթուղիկոսն գիտէ եւ ոչ ես. այլ ես գիտեմ զի Համազասպ (Հաւուցթառայ) եպիսկոպոսն է արարեալ զայդ նենդութիւնդ»: Թէ որքան ուղիղ էր կեղծիքն Հաւուցթառի եպիսկոպոսին վերագրելը, որ Մեւքիսեղեկի հակառակորդներէն էր, չի հետաքրքրեր զմեզ, բայց Ամիրզունա խան եւ Մովսիսի բոլոր բարեկամները գոհութիւն տուին Աստուծոյ, որ ազատեցաւ «անպարտն ի ձեռաց զրպարտողաց» (Դաւր. 298):

Մովսէսի երթն յԱսպահան եւ վերադարձը պէտք է տեղի ունեցած ըլլայ 1624ին: Էջմիածնի Թ. 960 Մաշտոցը 1624ին կ'իյնայ Զուղայեցի Շապանի եւ որդւոց ձեռքը, որոնք կը նուիրեն զայն իբրեւ յիշատակ «ի ձեռն հոգեւոր հաւրն մերոյ Մովսէս վարդապետին» (Թղ. 2բ), ի Զուղա՞յ:

Բախտը, որ սկսած էր ժպտիլ վարդապետին, ընծայեց իրեն նոր առիթ աւելի անարգել ընթանալու իւր ճանապարհին վրայ:

Հաւանօրէն այս միջոցին պէտք է զետեղել այն առաջարկը, զոր ըրաւ Մեւքիսեղեկ Մովսէս եպիսկոպոսին, եւ որուն մասին կը պատմէ Դաւրիժեցի (225): Երբ պարտքերը բազմացած էին եւ Մեւքիսեղեկ անհնարին կը տեսնէր դուրս գալ անտանելի կացութենէն՝ կը խորհի փոխանցել իշխանութիւնը պարտքերուն հետ Մովսէս վարդապետին. կ'առա-